

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գին և Պոլսոյ հարկ 8 ՄԷԶ
Չ Գաւառաց 10 ՄԷԶ
Վեցամեայ և Պոլսոյ 4 ՄԷԶ
Հաւառաց 5 ՄԷԶ
Բարձրանիւր թերթի գին 60 փրկ
Գանձուցման տողը մէկ անգամի հա-
ւար 3 զուրուշ, երկու անգամի հա-
ւար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը լլայ:



Լ Բ Ա Փ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հետեւեալ բարձր հրովարտակը
վեհ. Սուլթանին վստահութիւնը զգաց-
մանց, աշխարհաշէն խորհրդոց և
հայրախնամք իտաւարութեանց նոր
հիմնադիր մ'է, որոյ մէջ Ն. Կ. Վե-
հապառութեան քրիստոնեայ և ոչ-
մահմանական հարաւորները նորանոր
արտօնութեանց և շնորհաց մեծամեծ
բաժիններ ունին՝ յաւիտեանական օրհ-
նութեան և երախտագիտութեան
արժանի:

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱՅՍԵՐՈՎԱՆ

ՄԵԾԱՇՈՒԹ ԲԵՋԱՐԻԻ ԻՄ ՄԱՀՄՈՒՏ
ՆԵՏԻՄ ՓԱՇԱ

Քաղաքակրթեալ պետութեանց
պարտքն է հասարակաց իրաւունքն
ապահովելու նուիրել իրենց ջանքը:
Այս սկզբուն պահպանութեանը ծա-
ւառաց Բեջարիի որիք բանով ձեռք
չեն կրնար բերելու, բայց եթէ ար-
դարութիւնն ամենուն համար հաշիւ
և անխտրաբար գործադրելով, և
վարչութիւնն ալ կանոնաւորապէս
կազմաւորելով, Ահմատական շահերն
երկրին բարեկարգութեամբն ու բար-
գաւաճմամբն միայն կրնան ապահ-
ովել, զի մասնական շահերը սերտ
կապակցութիւն ունին հանրական շա-
հուց հետ:

Ամենուն յայտնի է արդէն, թէ
Մեր գահակալութեանն ի վեր, Մեր
կայսերական զիտաւարութեանց և
զգացմանց առաջին առարկայն եղած
է, Աստուծոյ օգնութեամբ, Մեր
կայսրութեան մեծութիւնն ու փառ-
քը, Մեր ամեն կարգի հպատակաց
անդորրութիւնն ու բարեկեցութիւ-
նը, և Մեր պետութեան երկիրնե-
րուն հարստութեանն ու բարգա-
ւաճման համար պէտք եղած յառաջ-
դիմութեան գորգացումը: Մեր այս
զիտաւարութիւններն աւելի կատա-
րելապէս արդիւնաւորելու համար
որոշեցինք արտօնութիւններ շնոր-
հել Մեր ամեն հպատակաց, և մի-
անգամայն հասարակային վստահու-
թիւնը լիովին ապահովող բարենո-
րոգումներ հրատարակել: Հետեւա-
բար, Մեր այս կայսերական հրովար-
տակաւ կը հրամայենք որ հետեւեալ
անօրէնութիւններն ի գործ դրուին
Ամենագործին Աստուծոյ շնորհիւ:

Հասարակային իրաւանց ապահ-
ովութեան հիմն է նախ՝ զատաւան-
նական իշխանութեան պաշտօնին՝
գործադիր իշխանութեան միջամտու-
թեանն կատարելապէս ազատ ըլլալն,
երկրորդ. ու և է զեղծման դէմ՝ օրի-
նաց պաշտպանութիւնը:

Դատական ատեններուն վրայ
հասարակութեան վստահութիւնը
գրաւելու համար, զանաք սահմա-
նելը միայն բաւական չէ, այլ պէտք
է նաեւ որ այն ատեններուն ան-
գամներն իրենց սուղ արժանեօքն,
անսոգիւտ վարուքն և ուղղու-
թեամբն, ինչպէս նաեւ արդարու-
թեան և իրաւանց համաձայն գոր-
ծելով հասարակաց համարմանն ու
յարգանաց արժանի անձինք ըլլան:

Մեր Արդարութեան բարձր Ատ-
եններն՝ այս ամեն պայմաններն ու բա-
րենամտութիւններն իւր վրայ կեդ-
րոնացնելու համար միայն հաստատ-
ուած է: Ուրեմն հարկ է տոյն խա-
րխիւններուն վրայ հիմնել նորա կազ-
մութիւնն ու իրաւասական պաշտա-
մունքը, և միանգամայն ընդ բար-
ւաքմունք մտցնել նորա պաշտամանց
այլ և այլ մասերուն մէջ:

Ինչպէս որ գաւառական ատենից
վարչական իշխանութեանն անկախու-
թիւնը միայն կրնայ նոյս անկողմնա-
կալութիւնն ապահովել, նոյնպէս գա-
ւառորայ ալ (օրինակ որ պատճառաւ
պաշտօնականութիւնն ի բաց տաւալ)
անխտրաբարութիւնը միայն կրնայ
զանաք ամենայն վստահութեան ար-
ժանի ընել: Պէտք է ուրեմն գա-
ւառորայ ընտրութիւնն այն կերպիւ-
րել, որ ամենուն յարգն ու վստա-
հութիւնը գրաւէ:

Քաղաքային և պատժական (նի-
զամի) ամեն ատեններուն գլխին
եղող Վճռալիկ ատենի (Տիւրք. Թեմ-
եի) իշխանութեանն իրաւասութիւնն
ըրբամիտեւ են Գաւառական նախարա-
րութեան իրաւասութիւններէն, և այս
ատենին երկու հաստաւանքը մէկ
Առաջին նախագահ և մէկ փոխ-նա-
խագահ պիտի ունենան:

Միանգամայն վերաքննութեան
ատենին (Իսթիֆա) և առեւտրական
գաւառականները պիտի միանան Գա-
ւառական նախարարութեան հետ, հե-
տեւ արար տաւարական նախարարու-
թեան կը մնայ վճռաւականութեան,
արտեսանից և երկրագործութեան
շարքացմանն ու յառաջդիմութեանը
վերաբերեալ խնդրոց զբաղի: Այս
նպատակաւ, Արդարութեան բարձր
ատենին կապուած վերաքննութեան
ատենին՝ առեւտրական վերաքննիչ
ատենին ինչպէս նաեւ եղեւնադատ
ատենին իրաւասութիւններն իւր
վրայ պիտի միացնէ, հետեւաբար,
քաղաքային, պատժական և առե-
ւտրական գործոց յատկացալ երեք
գաւառական պիտի ունենայ, թէ՛ ունի
ատենին և թէ՛ Վճռալիկ ատենին
նախագահներն ու գաւառները վե-
րաքննի պիտի ընտրուին այն կերպիւ-
ր որ օրինաց պահանջած ամեն պայ-
մաններն իրենց վրայ միացնեն:

Քաղաքային նախագատ ատեն-
ներն ալ նոյն կերպիւ պիտի բարե-

նորդին ու սահմանադրին: Այս ատ-
ենն ատենից և գաւառականաց ան-
գամներն ամենամեծ ու շաղկապեալ
պիտի ընտրուին և իւրաքանչիւրին
մէկ մէկ կայսերական Պէրաթ պիտի
տրուի, որ տաւանց օրինաւոր պատ-
ճառի պաշտօնականութեան զանաք
ապահովէ. միանգամայն յիշեալ ան-
գամաց ծերութեան կամ անկարու-
թեան պատճառաւ պաշտօնէ: քաղ-
ութեան և հանգստեան թաշակ ստա-
նալու իրաւունքն որոշող կանոնադ-
րութիւն մը պիտի չինուի:

Գաւառական գործոց կանոնաւոր և
արդար անօրէնութիւնն ապահովե-
լու համար Արդարութեան բարձր
ատենին այսպէս վերակազմելով քա-
ղաքային պատժական և եղեւնական
ամեն ատենները միօրինակ կազմա-
ւորութեամբ իրարու հետ կապելէ
ետեւ, իւրեքնք որ նոյն կանոնները
գործադրին նաեւ գաւառաց մէջ
հաստատեալ գաւառական ատեննե-
րուն նկատմամբ, որոց պաշտօնն է
իրաւունք ընել Մեր հպատակաց և
ամեն տեղ արդարութեան օրէնքը
թաղաւորելն:

Այդ Ատեններուն կազմութեան
վրայ հասարակութեան կատարածի
պատճառ մը չթողլու և իշխանու-
թեան միջամտութեանն ու ազդեցու-
թեանն զանաք ազատ պահելու հա-
մար բացօթյա կերպիւ հետեւեալ կը
հրամայենք:

Մեր ամեն հպատակներն արտօ-
նութիւն ունին իրենք ընտրելու թէ՛
յիշեալ Ատեններուն և թէ՛ գաւառ-
ային վարչական խորհրդոց անդա-
մներն ու գաւառները, մահմանա-
կան և ոչ-մահմանական: Ըստ այսմ
որոշ հրահանգներ պիտի գրկուին
տէրութեան ամեն գաւառներն՝ որ-
պէս զի այդ ատեններն ու խոր-
հուրդներն հաստատուին և վերը
հրամայուած ձևին համեմատ կազ-
մուին:

Գաւառագլուխները գտնուող
Նայիպները՝ տեղւոյն վերաքննու-
թեան ատենին նախագահութեան
պաշտօնը պիտի վարեն. իսկ նահան-
գագլխոց և չըմանակալ լիւոց քաղա-
քային և եղեւնադատ ատեններ-
ուն նախագահներն ամենէն ձեռքն-
հաս անձանց մէջ պիտի ընտրուին:

Նահանգագլխոց և չըմանակալ լի-
ւոց Շէրիի ատեններէն տրուած
վճիւրներուն Շէրիի նկատմամբ ընծու-
թիւնը գաւառագլխոց Նայիպներուն
կը վերաբերի: Եւ որովհետեւ գա-
ւառական ատենից հաստատութեան
գլխաւոր նպատակն իւրաքանչիւր ան-
ձի իրաւանց ապահովութեան երաշ-
խաւորութիւնները կեդրոնացնել է,
ուստի մեր Մահմետական հպատակնե-
րուն Քրիստոնեայ և ոչ-Մահմետական
հպատակաց հետ ունեցած դատերն՝

ինչպէս նաեւ մէկ քրիստոնեայ հպա-
տակաց իրարու կամ այլ ոչ-Մահմե-
տական կրօնքէ եղող հպատակաց հետ
ունեցած դատերն, ինչպէս գաւառեալ
այս վերջիններուն իրարու հետ ունե-
ցած դատերը՝ քաղաքային, պատժա-
կան և եղեւնական ատեններուն պի-
տի յանձնուին: Յիշեալ ատեններուն
գաւառագլուխները վերաբերեալ օ-
րէնքներն ու կանոնները՝ մեր կայսե-
րական հրամանագրերուն համեմատ
պէտք է շուտով ամրագրմանն ու գոր-
ծադրին: Օրէնաց հաւատարիմ պահ-
պանութիւնը բռնութեան դէմ ա-
պահովութիւն մ'է, հետեւաբար Մա-
հմաններուն անդու ուշադրութեանն
առարկայ պէտք է ըլլայ:

Նմանապէս օրինաց տրամադրու-
թեանց գործադրութիւնն, հաստատ-
եալ ոճրին ծանրութեան համեմա-
տութեամբ, լուրջ նկատողութեան
պէտք է առնուի, որպէս զի ոչ ոք
տաւանց գաւառատանի բանտարկուի,
և խաչտանգանքն ալ երբեք ներքին
չլլայ: Սոր համար պէտք է հրա-
տարակի թէ՛ այն սկզբանց հակա-
ռակ վարուողները գաւառատանի պի-
տի երթարկին, և օրինաց ամենայն
խառութեամբ պիտի պատժուին,
որպէս զի արդարութեան բացար-
ձակ յարգանքն ապահովի:

Մեր հպատակաց իրաւունքն ե-
րաշխաւորող հիմնական սկզբանց ա-
մենակարեւոր կէտերէն մին է պե-
տութեան վճարելի հարկաց և տրոց
բաշխման ինչպէս նաեւ հաւաքման
մէջ ուղիղ համեմատութիւն մը հա-
տատել արդար եղանակաւ: Ճշմա-
րիտ է թէ Գանձուն ընդհանուր հա-
սոյթները՝ Տէրութեան վարչական
և զինուորական ծախսոց համեմատ-
եալ են, և թէ այդ հասոյթներն
երկրին հարստութեան և հասարա-
կաց բարօրութեան հետզհետէ զար-
գացման հետ առանձնաբար աւել-
ցնելու միջոցները պէտք է փնտելի
բայց պէտք է նաեւ, և այս է Մեր
կայսերական կամքը, հրաժարիլ այն
հասութից ձեւերէն որք ժողովրդ-
ոց նեղակրութեան պատճառ մ'են՝
առանց կարեւոր շահ մ'ընծայելու
Գանձուն:

Մեր հպատակներուն վճարած
ներքին տրոց և հանգանակութեանց
զանազանութիւնը բաշխման և հա-
ւաքման անկանոն վիճակ մը յառաջ
բերելով, կը հրամայենք որ յիշեալ
հարկերը միացնելու եղանակ մը գըտ-
նուի և անմիջապէս գործադրի, որ-
պէս զի Մեր տէրութեան ժողովրդոց
բեւը թեթեւայ՝ արդար համեմա-
տութիւն մը հաստատուելով, առանց
Գանձուն օրինաւոր շահերն ալ վե-
տանգի մէջ ձգելու:

Տաւանորդի տրոց վրայ յաւել-
եալ քառորդին ջնջումէն զատ, զոր
Մեր ամեն հպատակաց բարեկեցու-

Թեան համար Մեր ունեցած կայսերական հոգածութեամբ անցեալներն հրամայեցին, պէտք է տակաւին ամենագլու միջոցներ ձեռք առնուի և թոյլ տալ որ տասնորդի տուրքը վարձակալաց միջնորդութեամբ հաւաքելու առթիւ բռնութիւններու անիրաւութիւններ գործուն, միանգամայն թոյլ տալ որ թէ՛ մեր երկրագործ ժողովրդաց և թէ՛ Մեր կայսերական գանձուն փաստ մը բերուի :

Եւ որովհետեւ Մեր հպատակաց ուղղապէս վճարած հարկերուն ալ հաւաքումն որ յատուկ բնութիւն մը պէտք է ունենայ, գաւառաց մէջ Զապիթիներուն յանձնուած է, և այս եղանակին ալ ապօրէն ըլլալն հասկցուած է այսօր, կը հրամայենք որ ոստիկանութիւնն այսուհետեւ բնաւ չխառնուի արոց հաւաքման գործերու, այլ մահմէտական և ոչ—մահմէտական ժողովուրդներէն ընտրեալ յատուկ հարկաւաքներ նշանակուին, որք յատկապէս պատրաստուելիք հրահանգաց համեմատ հարկերն հաւաքեն : Մեր կայսերական հաստատուն կամքն այս ըլլալով անյայտ 'ի դործ պիտի դուրս, որով թէ՛ Գանձուն իրաւունքն և թէ՛ հարկաց հաւաքման եղանակն երաշխաւորի :

Մեր հպատակաց շահերուն վերաբերեալ խնդրոց մին ալ անշարժ ստացուածոց սեփականագրերը (հէօճէթ) բարենորոգելու խնդիրն է : Սեփականագրեր տալու եղանակը մայրաքաղաքիս և գաւառաց մէջ տարբեր ըլլալով, շատ անգամ ալ սեփականագրերն ալ չգտնուելով, գաւառական առեւտրականներն չորս բազում աշխատութիւն կը անհրաժեշտ դժուարութիւններ ու դատեր կը ծագին 'ի փաստ ժողովրդաց, և անշարժ կալուածոց արժէքը կը կտրի : Այս անպատեհութեանց վերջ տալու համար, ամեն կարգի անշարժ ստացուածոց սեփականագրերն այսուհետեւ միմիայն Տէֆթերհանէի ընդհանուր վերատեսչութեան կողմէ պիտի տրուին : Ասոր համար կատարեալ հիմնարկ մը պիտի ներկայացուի որպէս զի Մեր ամեն հպատակաց սեփականութեան իրաւունքն ապահովի :

Մեր հանտարազօրեայ փոխաբանաց համեմատ Մեր ամեն հպատակաց կեանքն, ինչքն ու պատիւը պէտք է ապահովի, Հետեւաբար ստիկանութեան զինուորներն ամեն տեղերու բնակչաց փառհասութիւնը վայելող պարկեշտ անձանց մէջ պիտի ընտրուին : Ասոնց պաշտօնին վերաբերեալ տնօրէնութիւններն անմիջապէս պիտի գործադրին, որպէս զի Մեր ամեն կարգի հպատակաց մէջ փառհասութիւնն ու ապահովութիւնն առաւել ևս հաստատուի :

Մեր տէրութեան մէջ քաղաքակրթութեան յառաջդիմութիւնը Մեր բաղձանաց առաջինն ըլլալով, և ժողովրդեան մը հարստութիւնն ալ բարեկեցութեամբ միայն կրնալով աճիլ, իշխանութեան պարտքն է Մեր հպատակներն ամեն բռնութիւններէ ու զեղծումներէ ազատ պահել, ինչպէս են ձրի ծառայեցնելու հարստահարական միջոց, որ արդէն խաղաղ արգիլեալ է սկզբամբ, և որ ճանաչուած պողտայներու և այլ հասարակաց օգտի վերաբերեալ շինութեանց համար 'ի դործ կը դրուէր, շինութիւնք՝ որոց համար ժողովուրդը մեծ փոխ և հայրենասիրութիւն ցոյց կուտայ : Պէտք է ուրեմն զգուշանալ որ մեր հպատակներուն հասարակային շինութեանց համար մահ

տակարարած նպատակն անոնց անձանց և շահուց հարստահարութեան և փնտառ պատճառ մը չըլլայ : Հետեւաբար ներկայ պակասաւոր դրութիւնը պիտի բարենորոգի և առաւել երաշխաւորութեամբ շրջապատի : Որոշ և մանրամասն հրահանգներ պիտի տրուին վարչութեան պաշտօնատարաց, որպէս զի շարունակ հսկին և ուշագործ ըլլան որ այս մասին մեր կայսերական կամաց հաւաքակ բան մը չկրնայ երբեք գործուիլ :

Նկատելով որ մեր Պետութեան երկիրներուն մէջ երկրագործութիւնը արուեստներն ու վաճառականութիւնը բարենորոգելու և զարգացնելու համար պէտք եղած միջոցները ձեռք առնելու և մեր հպատակաց հարստութիւնն աւելցնելու ստիպողական հարկ կայ : Նկատելով նաեւ որ Նախարարական նախարարութեան բուն պաշտօնը մեր այս գիտաւորութիւնն իրացնել պիտի ըլլայ, կը հրամայենք որ այս նիւթերուն վրայ ձեռնհաս և կարող անձանց խորհուրդ հարցուն և նոցա որոշմունքը մեր կայսերական վաւերացմանը ներկայացուին :

Մեր ամեն կարգի հպատակներն, որք մեր կայսերական պաշտպանութեան հովանոյն ներքեւ կապրին, կատարելապէս հաւատարմ են Մեր աշխին և Մեր արդարութեան ըզգացմանց առջեւ : Ասոր համար կը հաստատենք Պատրիարքաց և այլ կրօնական գլխոց իշխանութիւնները զորս կ'փորեն իրենց հասարակութեանց գործերուն համար, ինչպէս նաեւ իրենց կրօնից ազատ պաշտաման համար, յիշեալ հասարակութեանց ունեցած արտօնութեանց և աղատութեանց համաձայն : Այն ամեն գործերն որք յիշեալ հոգեւոր գլխոց իշխանութեան, անոնց պիտոյից և անոնց յատուկ խորհրդոց ձեռնհասութեան ալ պիտի շարունակեն 'իրենց շնորհաւոր իրաւանց և արտօնութեանց սոհմանին մէջ՝ Մեր բոլոր պաշտպանութեանն առաւելոյ ըլլալ, և ամեն գիւրութիւնք պիտի շնորհուն իրենց եկեղեցեաց, վարժարանաց և այլ աղբային հաստատութեանց հիմնարկութեանն և շինութեան համար :

Մեր ամեն կարգի հպատակներն իրենց արժանեաց և յաջողութեան համեմատ տէրութեան պաշտամանց հասնելու և ստիճաններ ստանալու աղատութիւն ունենալով միշտ, Մեր ոչ—Մահմետական հպատակներուն այդ պաշտամանց մէջ ընդունուիլը կը հաստատենք՝ երբոր անոնց ուղղութիւնն ու յաջողութիւնը ճանաչուած ըլլայ :

Ձինուորական ծառայութեան անգամ մնալու տուրքն, որում Մեր ոչ—մահմետական հպատակներն թաղերեալ են, Մեր մահմետական հպատակաց վրայ պարտք դրուած զինուորական ծառայութեան փոխարինութիւն ըլլալու համար հաստատուած է : Բայց որովհետեւ իրաւանց հաւատարմութիւնը պարտուց ալ հաւատարմութիւն կենթադրէ, և ըստ որում տուրքը վճարողին տարիքն ու վիճակն արդար համեմատութեամբ 'ի հաշիւ չեն առնուած, և վերջապէս ոչ—մահմետական հասարակութեան մէջ սոյն արոց բաշխումն ու հաւաքումն արդար ու կանոնաւոր հսկողութեան մ'ենթարկեալ չէ, կը հրամայենք, իբրեւ նոր նշան Մեր արդարութեան, որ յիշեալ արոց բաշխումն այն կերպիւ ըլլայ, որ մեր

ոչ—մահմետական հպատակներէն ամեն անոնք որ գեւաքան տարուեցած չեն կամ քառասուն տարին անցած են, ինչպէս նաեւ հիւանդներն ու անկարեններն ազատ մնան այդ տուրքէն : Ուշագրութիւն պէտք է ըլլայ, որ այդ հանգանակութիւնն անհատական բաժնի վրայ հաշուելու կանոնն այս բնօրէնութեամբ չաւրուի, այլ տուրքն հանգանակողաց ստոյգութեան համեմատ հաւաքուի, և երբոր այդ թիւն աւելնայ, Գանձուն հասոյթն ալ նոյն յառաջատութեան հետեւի : Վերջապէս այդ արոց հաւաքումը, նոյն իսկ հանգանակողաց խնամք պիտի կատարուի վերը հրամայուած ձևով : Այսպէս եղած ժամանակ, զինուորական ծառայութեան ազատ մնալ ու զոյ մահմետականաց համար որոշուած ներկայ մարդդրոյն 100 լիւրայի տուրքն ալ նոյն հաւատարմական սկզբուն համեմատ 50 լիւրայի պիտի իջնէ :

Մեր տէրութեան երկիրներէն ամեն մէջ Մեր ոչ—մահմետական հպատակները չեն կրնար կալուածատէր ըլլալ, և աղարակներու մէջ կը գործածուին : Այս վիճակը Մեր արդարաւէր զգացմանց հակառակ ըլլալով, այսուհետեւ բնաւ խտրութիւն չպիտի ըլլայ Մեր հպատակաց մէջ, թէ՛ դատարկ մնացած և աճուրդով վաճառուած հողեր գնելու մասին, և թէ՛ մասնաւորներէ վաճառեալ հողեր : Հետեւաբար հողային ստացուածոց վրայ հաստատեալ օրինաց արամագրութիւններն ամենաւարեալ հաւատարմութեամբ վայելելու ապահովութիւն պիտի տրուի անոնց :

Գաւառաց մէջ բնակեալ Մեր ոչ—Մահմետական հպատակաց կտակները պիտի յարգուին, և անշարժ հաս ժառանգաց (հէթիմ) ինչքերուն խնամակալաց (վարի) ձեռք մատակարարութիւն խառնուիլ բնաւ ներքին չպիտի ըլլայ : Միայն թէ երբոր խնամակալաց և կտակատարաց գէժ յուսի մատակարարութեան գանդատ ըլլայ, այն ժամանակ իշխանութիւնը պիտի միջամտէ և անշարժ հասնեալ ընչից մատակարարութիւնն իւր հսկողութեան ներքեւ առնուի :

Մեր կայսերական կամքէն բեղխած այս ամեն հրամանաց և արտօնութեանց գլխաւոր նպատակն է Մեր վեհապետական իշխանութեան ներքեւ գտնուած ժողովրդաց բարեկեցութիւնն աւելցնել : Պետութեանց մեծութիւնը փառքն ու ապահովութիւնը չեն կրնար ուրիշ բանով հաստատ մնալ, բայց եթէ գործադիր իշխանութեանց ուղղութեամբն ու արդարութեամբ, հաստատեալ օրինաց ընդհանուր հնազանդութեամբ և իւրաքանչիւրին իրաւանց և յատկութեանց թէ՛ մեծաց և թէ՛ փոքունց կողմէ կատարեալ պահպանութեամբ : Ամեն անոնք որ Մեր տէրութեան երկիրներուն մէջ սոյն սկզբանց համեմատ վարուին, Մեր կայսերական շնորհաց արժանի պիտի ըլլան : Իսկ անոնք որ հակառակ վարուին, արդար պատժոց պիտի ենթարկին : Ուստի կը հրամայենք որ Մեր վաւերացման ներկայացեալ կանոն մը հաստատուի, որպէս զի Մեր վեհապետական հրամանաց հակառակ գործերն և այլ չարութիւնները նշանակելու համար ամեն տեղեկութիւնք և խնդրումք մեզ ներկայացունին կատարեալ ապահովութեամբ :

Նմանապէս կը կամիմ որ օրինաց խնթերի պահպանութիւնն ապահովելու համար ձեռք առնուած միջոց

ներէն զատ կանոններ ու հրահանգներ պատրաստուին Վալիներուն, Միւթիսարըֆներուն, Գայմագամներուն և առ հասարակ ամեն պաշտօնատարաց իրաւասութեան սահմանները Մեր կայսերական հրամանաց համեմատ որոշելու համար : Վերջապէս կը կամիմ որ ամենէն հասկցուն թէ՛ սոյն հրովարտեալ Մեր շնորհած արտօնութիւններն ու շնորհները մի միայն անոնց համար են՝ որք իրենց հաւատարիմ և անկեղծ հպատակութեան պարտականութիւնը կը կատարեն : Իսկ անոնք որ այս ճանաչուեալ եղած են, ընականաբար զուրկ պիտի մնան այս շնորհներէն :

Արդ, դուք որ Մեր մեծաշուք վէշերն էք, սոյն վեհապետական հրովարտեալ պիտի հրատարակէք պէտք եղած ձևով, թէ՛ Մեր մայրաքաղաքին և թէ՛ Մեր տէրութեան ամեն գաւառներուն մէջ, և պիտի հսկէք որ ամբողջարեւելած տրամադրութիւնները ճշիւ և շարունակաբար գործադրուին համար հարկ եղած ամեն միջոցները ձեռք առնուին :

Տուեալ 'ի 13 Ձիգատէ 1292
և 30 նոյ. 1875

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլնիւ 12 դեկտ.
Բեդրասպուրիէն անյայտ պատասխան կ'ապասուի Անտրասի կողմէն ըրած առաջարկութեանց, որ խիստ չափաւոր և թուրքից վեհապետին համար ալ խիստ յարգական կը համարուի :

Վէրսալ 11 դեկտ.
Ազգային ժողովը մէջ 12 ծերակուտականը ընտրուեցան, մին աշխարհականաց ցանկէն և 11 ալ ձախակողմեանց ցանկէն, որոյ եթէն աշխարհական են :

Լոնտոն 11 դեկտ.
Խորհրդարանաց բացումը փետր. 8 ին որոշուած է :

Նիւ Եօք 11 դեկտ.
Միացեալ—Հասնագաց մէջ ցորենի հունձն հարկին 25 աւել է այս տարի :

Վիլնիւ 11 դեկտ.
Քուէսթիոնան Բոլիթիւ լրագրերը կը ծանուցանէ թէ Պոսելոյ և Հէրսելի խաղացման նկատմամբ Աւստրիոյ ըրած առաջարկութեանց Բուսելոյ կողմէն սպասուած պատասխանը Բեդրասպուրիէն ճանաչայ հանուեր է 'ի Վիլնիւ :

Ելուտ է այն լուրը թէ Անտրասի կողմէն Հէրսելի ապստամբութիւնը խաղաղութեամբ պիտի աւելնէ եղած բարենորոգմանց վրայ շրջաբերական մը զրկել է օտար տէրութեանց :

Մատրիտ 13 դեկտ.
Կալէսի իշխանն հոս հասաւ :

Փարիզ 14 դեկտ.
Ազգային ժողովը մէջ Պ. Գուրբատ ձախակողմեանը միայն ծերակուտի անդամ ընտրուեցաւ այսօր : Քուէսթիոնը քիչ էին :

Փարիզ 14 դեկտ.
Ձախակողմեանց ցանկէն եթէն ծերակուտականը ալ այսօր ընտրուեցան : Իսկ աշխարհականաց ցանկէն ոչ ոք : Օրէսանեանք սարսափած են :

Վիլնիւ 14 դեկտ.
Լրագրերը կը հաստատեն թէ երբեք կառավարութիւնը Արեւելից մէջ իրենց դիւանագիտական ընթացքին հիմանը վրայ համաձայնած են :

Լոնտոն 14 դեկտ.

Սոս.	Քոնս.	24 1/2
Փոխ.	865	33
»	1869	27 1/2
»	1871	43
»	1872	44
»	1873	26 3/4
Երկր.		76 3/4
Անգլ.	Քոնս.	93 15/16

Լիւթիւրու 14 դեկտ.
Բաւարական Միտիլի—Օրէսան 7 1/4

Յայր Տօլերա՛ 4 3/4
Ծախսած 42000 հակ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐ

Կայսերական հրամանաւ

Ֆերիտուն պէ՛յ՝ Արտաքին գործոց օտար թղթակցութեանց պաշտօնատան մէջ նոր հաստատուել Սէլարհամարական գլխաւորին (Բոլիթիքա գլխաւոր) գլուխ անուանեցաւ :

Տալիստա Լիֆէնտին նոյն պաշտօնատան Հիւպատոսաց գլխաւորին գլուխ անուանեցաւ :

Օտեան Խաչիկ Լիֆէնտին նոյն պաշտօնատան Հեռագրաց գլխաւորին գլուխ անուանեցաւ :

Թօլիստա Լիֆէնտին նոյն պաշտօնատան Սրճահարութեանց գլխաւորին գլուխ անուանեցաւ :

Վէ՛հ. Սուլթանին երրորդ ամուսին և Բարձր. Մահմուտ շէյխէֆտին կայսրորդուոյն մայր թագուհին կիրակիէն երկուշաբթի լուսնալու գիշերը վախճանելով՝ երկուշաբթի օրը յուզարկաւորութիւնը կատարեցաւ փառաւոր հանգիստի և մարմինը Պէշիկթաշին Կ. Պօլիս Սուլթանի Մահմուտի դամբարանը տարուելով թաղուեցաւ :

Ելուստից նախարարութիւնն այս շաբթու 100000 լիւրայի գումար ո՛ւղղաւ գրկեց Պանքան :

ԱՌՏԱՆԴԵՆՈՒՅՈՒՆ		
ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ		
3 դեկտ. չորեքշաբթի իրիկուն	27	21
է դեկտ. հինգշաբթի առաւօտ		
բացուեցաւ	28	20
կէս օր	27	49

Կ. Պօլիս 3 դեկ.	
Սուրբ Եփէմէնի բաժնիք Ե. Պ. Գլխաւորին	22
« Պաշտօնատան թեան »	3, 25
Կ. Պօլիս Պանքային »	4 25
Գրէտի Ժէնէրալ »	5
Գրէտի Օսթրո-Թիւրք »	
Երկրի թուական »	69 3/4
Փոխ. 1863 »	166
» 1865 »	168
» 1869 »	141
» 1872 »	44
» 1873 »	139
Թրամուէլ »	2 65

ԸՆԹԱՐԳ ԳՐԱՐՈՑ 3 ԳԵՆՏԵՄԲԵՐ

Անգղ. լիւր »	110, 15
Նաբօլոն ուկի »	88 40
Խաչիկի Ռուս »	89 20
Գերմ. ֆր »	54 15
Հինգ ֆրանք »	—
Հինգրոց »	106,
Պրիւն »	134 20

Նախընթաց թուով հրատարակութեան սկսեալ Գումարաւորին նամակին մնացորդը :

Ա. Կ. Էֆէնտին օրինաւորութեան և արդարաւորութեան նկատմամբ ցոյց տրուած անհեղձ գլխաւորինը՝ որ սահմանադրութեան հիմնական սկզբանց, բանավարութեան, պատշաճից օրինաց, համեմատութեան և ժողովրդական իրաւանց գէ՛մ անարդարանալի բռնարարութիւն մ'է, ո՛ր օրէնք և ո՛ր ատեն կը ներեն և դորա հեղինակն արդար և անպարտ կ'արձակեն :

Այսպիսի անարդարանալի վարմունք մը՝ թաղին մէջ ընտրութեան իրաւունք և մասնակցութիւն ունեցող անձանց ինքնասիրութիւնն ու արժանապատուութիւնը վիրաւորող

ծանրակշիւ պարագայ մը չէ՞ արդեօք :

Ուստի որ կողմ ալ դառնանք, ընաւ արդարանալու կողմ մը չունենանալէ զատ՝ Մանգուէի նամակագրին այս մասին պահած բացարձակ լուսնութեամբն ալ հաստատուած է :

Գանք երրորդ կէտին, որ է անկարգութիւնն յանուն բարեկարգութեան :

Ո՞վ չի բերէ բարեկարգութիւն, ո՞վ չի փափաղիր և ո՞վ չի գիտէ, մանաւանդ այդ բարեկարգութիւնը երբ վարժարանի համար է :

Վարժարան բարեկարգել, դիւրին և թեթեւ դործ մը չէ, մեծ գործ է, զոր միայն ձեռնհաս անձինք կրնան ի յանդ հանել :

Մեծ գործ մ'է ըսինք, և ո՞վ այսպէս չէ համազուած :

Բացատրենք .

Վարժարան մը բարեկարգելու համար նախ հարկ է դաստիարակութեան այնպիսի հիմնադիր մը պատրաստել և այնպիսի ընթացիկ և ուղղութիւն մը տալ, որպէս զի ուսանողաց սիրտն ու միտքը կրճուի, զգացումներն ու բարքերը ազնուանան, բանավարութիւնն ուղղուի և ի մի բան՝ ըլլան բարի ազգային, բարի այր կատարեալ և բարեպաշտ :

Նաև և թէ դաստիարակութիւնը մեր մէջ պարտաւորիչ ընեն մեր ձեռնհասութեան վերէն, այնպիսի միջոցներ ձեռք առնուլ հարկ է, որպէս զի գոնէ կարենանք ձրի ընելով ընդհանրացնել զայն :

Հետեւեալ այս պէտք է ըլլայ թագ. Խորհրդոյ մը տեսութեան ամենէն բարձր կէտը, որպէս զի ազգային դաստիարակութեան մեծ և կենսական գործն հանրակայ :

Տեսնենք ուրեմն թէ մեր թագ. Խորհուրդն այս մասին ինչ մեծ ու կարեւոր ծառայութիւն մատուցած է մեր թաղին :

Վարժարանին հոգաբարձութեան անցեալ 74 ամի տպեալ համարատուութեան մէջ կը կարդանք .

« Այս վարժարանն էապէս և դրապէս վերափոխեալ ընթացից յարմարեցնելու համար հարկ կ'ըլլար նախ դուրս ձգուած միջանի կարեւոր ուսմանց դասեր ալ աւելցնել, զորս թՊՂՈՒԼ Կարգաւորութեան հոգաբարձութեան մատուկին անբաւականութեան տըխուր հարկին առջև սկսեալ խնարհելով :

Գարձեալ .

« Բայց վերակազմեալ հոգաբարձութեան 3—4 ամիս առաջ խնայողութեան բուռն ստիպմամբ ծախսից նուազութեան ձեռնարկելով, ցաւ ի սիրտ պարտաւորեցաւ 3—4 տղաներէն հրաժարական ընդունել Տես երես 12 »

Տեղեկագրին մէջ յիշուած այս տղերն ինչ կը նշանակեն. վարժարանին զարգացման մասին թագ. Խորհրդոյ առաւել թէ նուազ թործունէութիւնն և ուսումնասիրութիւնը կ'ապացուցանեն արդեօք, թագ. Խորհրդոյ կ'ըսենք, որոյ մասնակարարութեանը ենթարկեալ են բոլոր եկամուտները :

Ընթերցողաց կը թողունք դատել :

Հարկ կ'ըլլայ այս մասին քիչ մ'աւելի խօսիլ :

Տասն ամոյ չափ առաջ թագ. Խորհրդոյ անդամներէն ամենք իբր թէ վարժարանը բարեկարգելու ելնելով, օրինաւորապէս կազմեալ և վաւերացեալ հոգաբարձութեան մէջ կը մտնեն թագ. Խորհրդոյ հրահանգին 17 և 19 րէ յօդուածոց տրամադրութեան հակառակ և միայն

տարար ու բուռն կերպիւ կը գործեն :

Ա. Թագ. Խորհրդոյ հրահանգին 38 և Ուսումնական Խորհրդոյ հրահանգին 24—22 և 23 յօդուածոց գլխովին հակառակ՝ առանց քննութեան և դատաստանի մի քանի դաստաւք պաշտօնակիր կը գործեն :

Բ. Ուսումնական Խորհրդոյ հրահանգին 16 րէ յօդուածոց տրամադրութեան հակառակ տեսչի մ'ընտրութիւնը կը կատարուի :

Գ. Սահմանադրութեան հիմնական սկզբանց Գ. կէտին, և 52 րէ, Ուսումնական Խորհրդոյ 5 րէ և 30 րէ յօդուածոց գլխովին հակառակ ծանր թաշակներ կը սահմանուին և վճարումն յապարհեցնող և կամ անկարող աշակերտք խմբովին կարտաքսուին վարժարանէն :

Դ. Ուսումնական Խորհրդոյ 33 րէ յօդուածոց Բ. տրամադրութեան հակառակ պաշտօնէից հրահանգ կը տրուի :

Ե. Կիսամերկ և բոկոտն աշակերտաց մարմնամարզութիւն կը բերուի, խնայողութեան սկզբուն հակառակ և այլն :

Զ. Դաստաւայի գէ՛մ անարդական վարմունքներ ի գործ կը դրուին և անոնց պարտապաշտած յարգանք չընծայուի :

Եթէ ասոնք են Մանգուէի նուախագրին անտրկած բարեկարգութիւնները, և ի սէր տղերն հարկուաւոր զաւակաց խնամքը չպակսեցնող Մեկենասին անվարելի բարեքները, չիտակն ըսելով թաղեցին բարեկարգութեան և համարի զինքն որ այնպիսի չնախարհիկ Մեկենասի մը և անման տեսչի մը վիճակեր է, զորս ձեռքէ չհանելու համար ապաշտօն և ապերախութեան չէ, մասնաւորաբար 500 լիւրայի խնդիրն ալ հրապարակաւ պարզուեցաւ :

Ինչ անմոռութիւն, ըսել թէ խոստացող բարձրատիճան անձը իւր խոստումը որ զլացաւ, միջնորդն ինչ ընէ :

Մանգուէի նամակագիրը՝ և թէ քիչ մը պատշաճից օրինաց հմուտութիւն, խոհմութիւն և լրջութիւն ունենալ, տարակոյս չկայ որ կ'ըզուշանար այնպիսի անպատեհ խօսք մ'ընելէ, խօսք մը՝ որ կ'ընելու և դատելու կարողութիւն չունեցող մարդոց բերնին մէջ միայն կը վայէ, և խօսք մը՝ զոր թաղեցին յամենայն զօրութեան կը հերքէ և կը դատապարտէ, քով գիտնալով որ նոյն բարձրատիճան անձն իւր հանրածանօթ բարեկարգութեամբն ազգային բարեկարգութեան, և թէ իւր շնորհը բնաւ չըլլանար, եթէ օրինաւոր կերպով խնդրուի :

Այս է թաղեցւոյն անասան հուստը և այս իւր ջերմ զգացումը. ուստի բնաւ չկրնար ներել որ իւր զգացումն այլ ընդ այլոյ թաղմանուի :

Արդ՝ եղբակացնելով խօսքերնիս, կըսենք թէ մեր թաղին մէջ գործըւած զեղծմանց և անկարգութեանց միակ և անխուսափելի պատասխանատուն Տնտեսական Խորհուրդն է, որ իւր սահմանադրական պարտաւորութիւնն ի գործ չընելով և Մեծ Ժամակուհեան Էֆէնտին բողոքը նուազագուծութեան չափով, խնդիրն սկիզբէն օրինաւոր ճամբաւ մը մէջ չէր աւել, և իւր անմեկնելի լուսնութեամբը պաշտօնապէս քաջալերեց զեղծումն և օրինաւորացութիւնը :

Ի վերջ բան՝ թաղերը հանգըստութեան, խաղաղութեան, օրինաւորութեան և յառաջագիտութեան երես չալտի տեսնեն, մինչև որ թաղային ժողովները չհաստատուին թա

ղային ժողովներ կըսենք, վասն զի տասնք պիտի ըլլան թաղերու փերք :

Կուտեան միակ միջոց :

Այս արդար և իրաւացի պահանջումն ընելու զօրաւոր և անհերքելի ապացոյց մը չէ՞ միթէ մեր սոյն յօդուածը. — տարակոյս չկայ :

Կը խնդրեմ, Տէր Խորհրդաւորաց, բարեհաճեցէք հրատարակել զայս ձեր ազատասէր լրագրոյն մէջ :

1875 Նոյ. 31 Մնամ յարգանք ի Գումարաւոր

Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ :

Խնդրեմ, հաճեցէք ներկայս ձեր ազատասէր լրագրին մէջ հրատարակել և ձեր կողմէն պէտք եղած հրահանգ կարգալ :

ՀՐԱՄԱՐ

ՈՒ ՀԱՄԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՄԵՐ ՀԱՅՍ

Ազնիւ Հայեր :

Ինչպէս յայտնի է, Թատրոն ամուսն գաւելտական ազատասէր թերթը, անցեալ շաբթու բարձրագոյն հրամանաւ ամսուան մը համար դադարեցաւ :

Տարակոյս չը կայ թէ ամեն Հայ պարտք է, Թատրոնի նկատման կրած հարուածը թեթեւեղութեամբ փութալ, որովհետեւ նորա դադարման պատճառն իւր հայրենասիրական եռանդով Մեղեաց կրած տառապանաց վրայ դրած մէկ յօդուածն եղած է :

Ուստի քով գիտնալով որ ամեն Հայ իւր այս նուիրական պարտքը կը ճանչէ և զայն կատարել կը փութայ, նուաստ հանգանակութիւն մը բացած եմ, առ որ կը հրաւիրեմ ընթերցասէր ազգայինները :

Հանգանակութեան մասնակցի ու զոք կրնան գիտնել, բայց կիրակի օրերէ ամեն օր ժամը 7 1/2-էն մինչ 10, Չաբմաքընար եղուչի և Քիւլիւք Եֆէնտին վերի յարկ թիւ 11, փաստաբան Մեծ. Պօլիս Լիֆէնտի Միլիտիշեանի գրասենեակը, նաև ամեն օր որ և է ժամանակ Սամաթիա, Սիլուս Սուրբ փառքը սեղանաւոր ծխախմբաւ Մեծ. Քերթիքէ ազա Ֆերթալ անեանի խանութը :

Հանգ անակութեան արդիւնքը և մասնակցողաց անունները լրագրաց մէջ պիտի հրատարակուի :

Կ. Պօլիս Ա. Կինկուս հրահանգ 1875 դեկտ. 3 լու ընդունելութեանը Եֆէնտին Կ. Համաճեմ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՄԵՐ ՄԱՆԻՄՆՑ

ՏԵՏՐԱԿ Ա. ԵՒ Բ.

Յօրինեաց Գարեգին վարդապետ Սըր. Լանտեանց

Դարոցական տղայոց խիստ ախարժիկ եւ զուարճալի պարունակութեամբ սոյն ընթերցարանները պատկերազարդ երկրորդ-ապագութեամբ ի լոյս ընծայուած, կը գտնուին Մէրճանը Մարգարեան Ե. Էֆէնտին գրատունը, գին առաջինը 2 զրդ եւ երկրորդին՝ 3 զրդ : Շատ թուով գնողաց զեղչով կը արուի : Դաւաւացեաց համար աւելի յարմարագոյն է թէ՛ լեղուով եւ թէ՛ նիւթերով :

ԱԳԼԻՄԱՆԴՐԻ ՄԱՆԻՄՆՑ

ԽՕՍԵՑԱԼԻ

Թարգմանեալ ի Հեռն Հ. Եղեարդոյ Հիւրմիւզեան արքեպիսկոպոսի Շիրակոյ ի Սիլիթարեան Ուխտէն վեհեակոյ Եֆէնտին Հարգ

Դարոս նշանաւոր բանաստեղծներէն Ս. Զ. Եղեարդոյ Մանմանի խոսքացոյց անունն անմահացնող ընտիր վիպասանութիւն մ'է, սքանչելի հայկաբանութեամբ թարգմանեալ, ամեն հայ բանասիրաց ընթերցման արժանի : Կը գտնուի Պ. Ե. Մարգարեանի եւ այլ գրալուծաւոր քով : Գին երկու հատորին 10 ֆրանք :

[illegible]